

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿԱՐԶԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑԿԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՆՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

### 1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Տնտեսական` ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է: Տնտեսական գործունեության ազատության սկզբունքն ազատ քաղաքացիական հասարակության կայուն գոյության նախադրյալ է, մարդու ազատության տնտեսական հիմքը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը, ի թիվս այլնի, հիմնված է նաև տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության վրա:

Տնտեսական գործունեության ազատությունը իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն է՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքն օրենքով չարգելված տնտեսական՝ այդ թվում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար, իսկ տնտեսական մրցակցության երաշխավորումը պետության ստանձնած պարտականությունն է՝ պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը պաշտպանությանը:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ ամրագրվել է, որ չափազանց կարևոր է Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից պատասխանատվության միջոցների կիրառման համակարգի վերանայմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների իրականացումը, որը կսահմանի համաչափ և հայեցողության իրացման կանխատեսելի չափանիշներով պատասխանատվության միջոցներ:

Բացի այդ, Կառավարության 2020 թվականի փետրվարի 27-ի N246-L որոշմամբ հաստատված Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2020-2023թթ. միջոցառումների ծրագրով ամրագրվել է Հանձնաժողովի կողմից վարչական վարույթների իրականացման արդյունավետ մեխանիզմների, վերահսկման առավել արդյունավետ լծակների ներդրման անհրաժեշտությունը և ըստ այդմ՝ օրենսդրական փոփոխությունների իրականացումը:

Տնտեսական մրցակցության ոլորտը կարգավորող հիմնական օրենքը՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք), ընդունվել է մոտ 20 տարի առաջ՝ 2000 թվականի նոյեմբերի 6-ին և մինչ օրս ենթարկվել բազմաթիվ փոփոխությունների: Չնայած Օրենքում իրականացված մի քանի փոփոխությունների՝ այն ունի դեռևս զգալի բարեփոխման կարիք, ինչը մի կողմից պայմանավորված է իրավական բացերի առկայությամբ, իսկ մյուս կողմից առկա կարգավորումների անկատարություններով, որոնց լուծումն ունի առանցքային նշանակություն ազատ տնտեսական մրցակցության պաշտպանության շարունակական կատարելագործումն ապահովելու նպատակով: Այսպես, ի թիվս այլնի, հիշատակման են արժանի հետևյալ հիմնահարցերը.

### **1) Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթները**

Ներկայումս Հանձնաժողովը Օրենքով իրականացնում է իրենց բնույթով միանգամայն տարբեր վարույթներ՝ իրավախախտման վարույթ, համակենտրոնացման գնահատման վարույթ և եզրակացությունների ընդունման վարույթ, սակայն էական տարբերություններ ունեցող այս վարույթների իրականացումն Օրենքով ունի միատեսակ կարգավորում, ինչը բազմաթիվ խնդիրների առաջ է կանգնեցնում և Հանձնաժողովին, և վերջինիս կողմից իրականացվող վարույթների մասնակիցներին:

### **2) Իրավախախտման վերաբերյալ վարույթը.**

1. Օրենքով տարբերակված չեն վարույթի մասնակիցները, նրանց իրավունքների ու պարտականությունների ծավալը, վարույթի հարուցման առիթները:

2. Օրենքով նախատեսված չէ իրավախախտման վարույթ հարուցելու առիթները նախնական ստուգման ենթարկելու ընթացակարգ և վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պայմաններում հարուցումը մերժելու հնարավորություն:

3. Վարույթի իրականացման ժամկետը հաճախ չի բավականացնում լրիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու համար:

4. Օրենքը չի կարգավորում վարչական վարույթների միացումն ու առանձնացումը:

5. Տարբերակված չեն իրավախախտման վարույթներով ընդունվող որոշումների տեսակները և դրանց առանձնահատկությունները:

6. Օրենքը հնարավորություն չի նախատեսում իրավախախտման վարույթը վերսկսել այն դեպքում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով արձանագրվել է Հանձնաժողովի կողմից տուգանքի չափի որոշման հայեցողական լիազորությունները ոչ իրավաչափ իրականացնելու հանգամանքը և այլն:

### **3) Պատասխանատվության միջոցները.**

Օրենքը իրավախախտումների համար նշանակվող տուգանքների չափերը սահմանելիս նախատեսել է դրանց առավելագույն շեմեր, ինչը թուլացնում է օրենքով նախատեսված պատասխանատվության կանխարգելիչ նպատակի իրագործման հնարավորությունը, քանի որ տնտեսվարող սուբյեկտների համար հնարավորություն է ստեղծում իրավախախտման արդյունքում ստանալ ավելի շատ շահույթ, քան նրանք կարող են տուգանվել կատարված իրավախախտման արդյունքում: Նման իրավակարգավորումները խարխլում են տնտեսական մրցակցության պաշտպանության ողջ քաղաքականությունը, քանի որ ձեռնարկված բոլոր միջոցները չեն ծառայում իրենց նպատակին:

Օրենքը նաև չի նախատեսում պատասխանատվության միջոցների կիրառման չափորոշիչները հստակեցնող կարգ սահմանելու անհրաժեշտություն:

### **4) Համակենտրոնացումների գնահատման պարզեցված ընթացակարգը.**

Օրենքը համակենտրոնացումների գնահատման համար նախատեսում է միասնական կարգ, մինչդեռ որոշ դեպքերում այդ գործընթացը հնարավոր է իրականացնել նաև պարզեցված կարգով՝ խնայելով Հանձնաժողովի և վարույթի մասնակիցների ռեսուրսները, քանի որ տարբեր ապրանքային շուկայի մասնակիցների համակենտրոնացումը ինքնին խորը ուսումնասիրության կարիք և շուկայի վրա ազդեցություն, որպես կանոն, չի ունենում:

**5) Անձանց խմբի ներսում իրականացվող վերակազմակերպումների, գործողությունների կամ գործարքների կարգը.**

Օրենքը չի նախատեսում անձանց խմբի ներսում իրականացվող վերակազմակերպումների, գործողությունների կամ գործարքների վերահսկման մեխանիզմ, ինչի շնորհիվ իրականացվող համակենտրոնացումները շատ դեպքերում չեն բացահայտվում, իսկ բացահայտված դեպքերում էլ խախտման վարույթը կարճվում է համակենտրոնացումն անձանց խմբի ներսում իրականացված լինելու հիմքով:

#### **6՝ Եզրակացությունների ընդունումը.**

Օրենքով միասնական կարգավորում չունեն Հանձնաժողովի եզրակացությունների ընդունման ընթացակարգերը, ինչպես նաև նման եզրակացությունների իրավաբանական բնույթը հստակեցված չէ:

#### **7՝ Բանակցային ուժեղ դիրքը.**

Մանրածախ առևտրի ոլորտում գնորդի/ձեռք բերողի (օրինակ՝ առևտրային ցանցերի) բանակցային ուժեղ դիրքի չարաշահման և առևտրային ցանց-մատակարար փոխհարաբերություններում անբարեխիղճ առևտրային գործողությունների իրականացման արդյունքում տնտեսական մրցակցությունը սահմանափակվում և արգելվում է, մինչդեռ Օրենքը չի նախատեսում բանակցային ուժեղ դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող չարաշահումներն արգելելու հնարավորություն, ինչը մեծ խոչընդոտներ է ստեղծում ազատ տնտեսական մրցակցության համար:

Հարկ է նշել, որ մանրածախ առևտրի ոլորտում ազատ մրցակցության ապահովման նպատակով գնորդ/ձեռք բերող հարաբերություններում առկա բանակցային ուժեղ դիրքի իրավակարգավորումների սահմանման, դրա չարաշահման արգելման ամրագրման անհրաժեշտությունն ամրագրվել են ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (UNCTAD) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) մի շարք զեկույցներում, ինչպես նաև համապատասխան իրավակարգավորումներ նախատեսված են շուրջ 40 զարգացած և զարգացող պետությունների օրենսդրությամբ:

#### **8՝ Հակամրցակցային այլ համաձայնություններ.**

Օրենքը նախատեսում է միայն հորիզոնական և ուղղահայաց հակամրցակցային համաձայնությունների արգելք, մինչդեռ տնտեսական մրցակցության վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ նաև դրանց մեջ չներառվող այլ հակամրցակցային համաձայնություններ: Նման իրավակարգավորում նախատեսված է նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով:

#### **9՝ Համակենտրոնացումների նոր ձևեր.**

Օրենքը համակենտրոնացում չի համարում մտավոր սեփականության իրավունքի կամ անհատականացման այլ միջոցի օգտագործման իրավունքի ձեռքբերմամբ կամ նոր իրավաբանական անձի հիմնադրմամբ տնտեսվարող սուբյեկտների ակտիվների և արտադրական հնարավորությունների

կենտրոնացումները, մինչդեռ դրանք կարող են նույնքան բացասական ազդեցություն ունենալ տնտեսական մրցակցության վրա, ինչքան համակենտրոնացում համարվող այլ դեպքերում:

#### **10) Հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը.**

Օրենքը Հանձնաժողովի անդամի համար Հանձնաժողովի որոշումից տարբերվող կարծիք ունենալու դեպքում չի նախատեսում հատուկ կարծիք տալու հնարավորություն:

#### **11) Ծանուցման համակարգը.**

Զնայած տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը՝ Օրենքով նախատեսված չէ վարույթի մասնակիցներին առաջնահերթ էլեկտրոնային եղանակով ծանուցելու հնարավորություն, ինչի պատճառով ձգձգվում են վարույթի իրականացման ժամկետները և վատնվում ռեսուրսներ:

#### **12) Նիստերին մասնակցությունը.**

Արդի տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս վարույթի մասնակիցներին իրենց լսված լինելու իրավունքն իրականացնել նաև ժամանակի իրական ռեժիմում առցանց եղանակով, մինչդեռ Օրենքը այդ հարցը չի կարգավորում:

#### **13) Մշտադիտարկման համակարգը.**

Հանձնաժողովը տարեկան բազմաթիվ դիմում-բողոքներ է ստանում քաղաքացիներից տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների գների հարցում թույլ տրված խախտումների վերաբերյալ: Օրենքը չի նախատեսում շարունակական մշտադիտարկումներ իրականացնելու հնարավորություն, ինչը թույլ կտար այդ խախտումներն արձանագրել ավելի վաղ, քան դրանք կարող են հայտնաբերվել սպառողների կողմից և մեծ ազդեցություն ունենալ նրանց վրա:

#### **14) Հանձնաժողովի անդամի գործունեության երաշխիքները.**

Հանձնաժողովի՝ որպես ինքնավար մարմնի լիազորությունները, անկախության երաշխիքները, անդամներին ներկայացվող պահանջները և գործունեության կարգը պետք է սահմանվեն օրենքով: Մինչդեռ, գործող կարգավորումները չեն նախատեսում Հանձնաժողովի անդամի գործունեության բավարար երաշխիքներ:

#### **15) Ստուգումներ իրականացնող անձանց լիազորությունները.**

Ստուգումներ իրականացնող անձանց լիազորություններում բացակայում են տնտեսվարող սուբյեկտի տրամադրության տակ գտնվող ցանկացած շենք կամ փաստաթղթեր կապարակնքելու, տնտեսվարող սուբյեկտի մոտ առկա տեխնիկական միջոցներից օգտվելու, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտի տարածք համակարգիչ, մագնիսական կրիչներ, հաշվիչներ և այլ սարքեր բերելու հնարավորությունը, ինչը խոչընդոտներ է ստեղծում ստուգումներ իրականացնելիս:

#### **16) Ֆիզիկական անձանց վարչական իրավախախտումները.**

Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկայի ընթացքում բացահայտվել են պաշտոնատար անձ չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Օրենքի խախտմանը՝ անբարեխիղճ մրցակցությանը, համակենտրոնացման

չհայտարարագրմանը, Հանձնաժողովին և Հանձնաժողովի աշխատողների աշխատանքին խոչընդոտելուն առնչվող բազմաթիվ դեպքեր, որոնք էականորեն սահմանափակել և անգամ արգելել են տնտեսական մրցակցությունը, բազմաթիվ դեպքերում՝ անհնարին դարձրել Օրենքի հնարավոր խախտումների բացահայտումը, մինչդեռ գործող կարգավորումների համաձայն վերոնկարագրյալ իրավախախտումների դեպքում Հանձնաժողովն իրավասու է ֆիզիկական անձին տալ միայն նախազգուշացում, այն էլ՝ միայն համակենտրոնացմանն առնչվող իրավախախտումների համար: Ընդ որում տնտեսվարող սուբյեկտները, օգտագործելով վերոնշյալ օրենսդրական բացը, շատ հաճախ իրավախախտումն իրականացնում են ֆիզիկական անձի միջոցով՝ այդպիսով Օրենքի պահանջների շրջանցման միջոցով սահմանափակելով և արգելելով տնտեսական մրցակցությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով ֆիզիկական անձանց կողմից կատարվող մի շարք իրավախախտումների համար պատասխանատվություն նախատեսված չէ:

#### **17) Քրեական պատասխանատվությունը.**

Քրեական օրենսգրքում հակամրցակցային գործողություններն արգելող 195-րդ հոդվածում առկա են ձևակերպումներ, որոնք չեն համապատասխանում Օրենքով սահմանված հասկացություններին, ինչի հետևանքով կարող են խնդիրներ առաջանալ այդ արարքների որակման հարցում: Բացի այդ, նախատեսված հանցակազմը ձևական է, ինչը չափազանց խիստ մոտեցում է նման արարքների համար:

#### **18) Օպերատիվ հետախուզական միջոցառումները.**

Հանձնաժողովի առջև դրված նպատակներն ու ստանձնած լիազորությունների իրականացումը շատ դեպքերում անհնար է առանց օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցության, ինչը խիստ անհրաժեշտ է ոչ միայն տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների բացահայտման, այլև կանխման համար: Մասնավորապես, հակամրցակցային համաձայնությունները գրեթե բոլոր դեպքերում կայացվում, Օրենքի այլ խախտումները շատ դեպքերում կատարվում են գաղտնի բանավոր համաձայնությունների միջոցով, մինչդեռ Օրենքի խախտման առկայությունը բացահայտելու և հաստատելու Հանձնաժողովի միակ գործիքը ստուգումների սահմանափակ լիազորությունների և տեղեկատվություն պահանջելու միջոցով փաստաթղթային ապացույցների ձեռքբերումն է: Նման պայմաններում դժվարանում և շատ դեպքերում անհնարին է դառնում Օրենքի խախտման փաստի ապացուցումը, և վարչական վարույթը կարճվում է, թեև առկա են ողջամիտ կասկածներ Օրենքի խախտման առկայության վերաբերյալ: Այս ամենը բացասական ազդեցություն է ունենում Հանձնաժողովի կողմից Օրենքի խախտումները բացահայտելու և արդյունավետ տնտեսական մրցակցություն ապահովելու հարցում:

Պետք է նշել, որ ապացույցներ ձեռք բերելու Հանձնաժողովի սահմանափակ իրավասությունների խնդիրը բարձրացվել և Հանձնաժողովին ստուգումների լայն

հնարավորության ընձեռնման (տնտեսվարող սուբյեկտի տրամադրության տակ գտնվող ցանկացած շենք կամ փաստաթղթեր կապարակնքելու, տնտեսվարող սուբյեկտի մոտ առկա տեխնիկական միջոցներից օգտվելու, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտի տարածք համակարգիչ, մագնիսական կրիչներ, հաշվիչներ և այլ սարքեր բերելու), այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական տվյալների տրամադրման անհրաժեշտությունը բազմիցս շեշտվել և ամրագրվել է ԵՄ և Համաշխարհային բանկի փորձագետների կողմից, ամրագրվել է ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի Հայաստանի վերաբերյալ «Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն» խորագրով 2019 թվականի զեկույցում (UNCTAD Investment policy review of Armenia, 2019)<sup>1</sup>, Համաշխարհային բանկի խմբի կողմից 2018 թվականին կազմված «Հայաստանի համար մրցակցության բարեփոխումների գնահատում» ԽԾԿ վերտառությամբ հուշագիր-զեկույցում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշմամբ:

**19) Ֆինանսական և հանրային ծառայությունների ոլորտներում մրցակցության պաշտպանությունը.**

Գործող իրավակարգավորումներով հստակեցված չէ ֆինանսական և հանրային ծառայությունների ոլորտում մրցակցության պաշտպանություն իրականացնող սուբյեկտների իրավասությունների շրջանակը և համագործակցության կարգը, ինչը բացասական ազդեցություն է ունենում ոչ միայն այդ ոլորտներում մրցակցության պաշտպանության, այլև ֆինանսական և հանրային ծառայությունների ոլորտների հետ փոխկապակցված այլ ոլորտներում մրցակցության պաշտպանության արդյունավետության վրա:

**20) Հանձնաժողովի հանձնարարականների հարկադիր կատարումը.**

Գործող իրավակարգավորումները նախատեսում են միայն Հանձնաժողովի տուգանք նշանակելու մասին որոշումների հարկադիր կատարման հնարավորություն, իսկ Հանձնաժողովի հանձնարարականների հարկադիր կատարման հնարավորություն նախատեսված չէ, ինչի հետևանքով այդ որոշումները շատ դեպքերում չեն ծառայում իրենց նպատակին՝ ժամանակին չկատարվելու հետևանքով:

**21) Հանձնաժողովի կողմից ընդունվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորության նորմատիվային հիմքի ապահովում.**

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ

<sup>1</sup>Տե՛ս [https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcb2019d3\\_en.pdf](https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcb2019d3_en.pdf) հղումով:

նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

Հանձնաժողովի գործունեության լիարժեք իրականացման համար անհրաժեշտ են մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնք ընդունելու համար Սահմանադրությունը պարտադիր է համարում հստակ և ուղղակի լիազորող նորմերի առկայությունը, մինչդեռ Օրենքը չի նախատեսում դրանք:

**22Պ Օրենքի չի համապատասխանում օրենսդրական տեխնիկայի գործող կանոններին**

Վերոշարադրյալը վկայում է Օրենքն ամբողջությամբ վերախմբագրելու և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու խիստ անհրաժեշտության մասին:

## **2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) կարգավորվել են հետևյալ հարցերը՝

1. տարբերակվել են Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթները՝ սահմանելով դրանց բնորոշ առանձնահատկությունները:

2. տարբերակվել են իրավախախտման վարույթի մասնակիցները, նրանց իրավունքների ու պարտականությունների ծավալը, վարույթի հարուցման առիթները:

3. նախատեսվել է իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու առիթները նախնական ստուգման ենթարկելու ընթացակարգ և վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պայմաններում հարուցումը մերժելու հնարավորություն:

4. նախատեսվել է իրավախախտման վարույթի ժամկետն անհրաժեշտության դեպքում եռամսյա ժամկետով երկարաձգելու հնարավորություն:

5. կարգավորվել են վարչական վարույթների միացումն ու առանձնացումը:

6. տարբերակվել են իրավախախտման վարույթներով ընդունվող որոշումների տեսակները և դրանց առանձնահատկությունները:

7. նախատեսվել է իրավախախտման վարույթը վերսկսելու հնարավորություն այն դեպքում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով արձանագրվել է Հանձնաժողովի կողմից տուգանքի չափը որոշելու հայեցողության ոչ իրավաչափ իրականացնելու հանգամանքը:

8. նախատեսվել է Հանձնաժողովի թղթակցությունը վարույթի մասնակիցներին էլեկտրոնային եղանակով հանձնելու ընթացակարգ:



9. նախատեսվել է Հանձնաժողովի նիստերին տեսաձայնային կապի միջոցով մասնակցելու հնարավորություն:

10. նախատեսվել է Հանձնաժողովի որոշումներով իրավախախտման վարույթի պատասխանողի գույքի վրա կիրառված տուգանքի չափով արգելանք դնելու հնարավորությունը:

11. միասնական կարգավորումներ են նախատեսվել Հանձնաժողովի եզրակացությունների ընդունման համար:

12. սահմանվել է բանակցային ուժեղ դիրքի չարաչափման արգելք:

13. նախատեսվել է հակամրցակցային այլ համաձայնությունների արգելք:

14. նախատեսվել են համակենտրոնացման նոր ձևեր:

15. նախատեսվել է Հանձնաժողովի անդամի՝ հատուկ կարծիք տալու հնարավորություն:

16. նախատեսվել է տուգանքների կիրառման առավել արդյունավետ մեխանիզմ:

17. սահմանվել է Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոցների ընտրության հստակ չափանիշներ սահմանելու հնարավորություն:

18. նախատեսվել է ապրանքների գների վերահսկման նպատակով շարունակական մշտադիտարկումներ իրականացնելու հնարավորություն:

19. նախատեսվել է համակենտրոնացումների գնահատման պարզեցված կարգ:

20. նախատեսվել է անձանց խմբի ներսում իրականացվող վերակազմակերպումների, գործողությունների կամ գործարքների վերահսկման մեխանիզմ:

21. սահմանվել են Հանձնաժողովի կողմից ընդունվելիք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նորմատիվ հիմքերը:

22. նախատեսվել են Հանձնաժողովի անդամի գործունեության ինստիտուցիոնալ երաշխիքներ:

23. ստուգումներ իրականացնող անձանց լիազորություններում նախատեսվել է տնտեսվարող սուբյեկտի տրամադրության տակ գտնվող ցանկացած շենք կամ փաստաթղթեր կապարակնքելու, տնտեսվարող սուբյեկտի մոտ առկա տեխնիկական միջոցներից օգտվելու հնարավորություն:

24. ֆիզիկական անձանց կողմից կատարվող մի շարք իրավախախտումների համար նախատեսվել է վարչական պատասխանատվություն:

25. Քրեական օրենսգրքում հակամրցակցային գործողություններն արգելող 195-րդ հոդվածում առկա ձևակերպումները համապատասխանեցվել են Օրենքով սահմանված հասկացություններին, ինչպես նաև հանցակազմը ձևականից դարձվել է նյութական:

26. նախատեսվել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցության մեխանիզմ:

27. հստակեցվել է ֆինանսական և հանրային ծառայությունների ոլորտում մրցակցության պաշտպանություն իրականացնող սուբյեկտների իրավասությունների շրջանակը և համագործակցության կարգը:

28. նախատեսվել է Հանձնաժողովի հանձնարարական պարունակող որոշումների հարկադիր կատարման հնարավորություն:

29. նախատեսվել են ազատ տնտեսական մրցակցության պաշտպանության համար բավարար երաշխիքներ ստեղծելու նպատակով օրենսդրական այլ փոփոխություններ և լրացումներ:

### **3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները**

Նախագծերը մշակվել են Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից:

### **4. Ակնկալվող արդյունքը**

Նախագծերի ընդունման դեպքում ակնկալվում է ստեղծել տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության, բարեխիղճ մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ միջավայրի և սպառողների շահերի պաշտպանության համար արդյունավետ կառուցակարգեր և ընթացակարգեր: